ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անի Խանաղյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի ավագ մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Լյուբլյանա (Սլովենիայի Հանրապետություն), 2024 թվականի հոկտեմբերի 7-11-ը:

3. Հրավիրող կողմը.

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն.

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

«Հիմքի էրոզիա և շահույթի տեղափոխում 1/Base Erosion and Profit Shifting 1» թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակն էր քննարկել BEPS-ի բազմակողմ գործիքակազմը, գործողությունները, դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև Սլովակիայի Հանրապետության օրինակով քննարկել տրանսֆերային գնագոյացման համակարգը, ստուգումների պլանավորումը:

5. Քննարկված թեմաները.

Աշխատաժողովի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) BEPS-ի մասով ընդհանուր ներածություն (BEPS-ի բոլոր գործողությունների ընդհանուր ակնարկ),

2) BEPS հարկային պայմանագրի հետ կապված միջոցառումներ և MLI,

3) BEPS Գործողություններ 8-10 և 13:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում ձեռքբերված գիտելիքները, BEPS-ի գործողությունների, հարկային պայմանագրերի հետ կապված միջոցառումների և MLI-ի մասով քննարկումները լայն հնարավորություն ստեղծեցին մանրամասն ծանոթանալու միջազգային հարկային հարաբերությունների լավագույն փորձին, առանձին կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու առանձնահատկությունների հարցերը:

Ստորագրությունը, **ամսաթիվը**:

15.10.2024թ.